ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1961 Общественные науки

Մ. Ս. Սակիև

ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՃՄԱՆ ՏԵՄՊԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ[1]

ՍՄԿՊ նոր Ծրագիրը կոմունիզմի կառուցման կոնկրետ ծրագիրն է և մարքս-լենինյան տեսության զարգացման մի նոր էտապ։ Այդ ծրագրում ծավալուն կերպով շարադրվում է պարտիայի և սովետական ժողովրդի հիմնական խնդրի ամբողջ կոմպլեքսը երկու տասնամյակի ընթացքում, երբ կստեղծվի կոմունիզմի նյութա-տեխնիկական բազան։

Առաջիկա 10 տարվա ընթացքում արդյունաբերական արտադրանքի ծավալը կավելանա մոտավորապես 2,5 անգամ և կգերազանցի ԱՄՆ-ի արդյունաբերական արտադրանքի ներկայիս մակարդակը։ Իսկ 20 տարվա ընթացքում արդյունաբերական արտադրության ծավալը կաճի ո՛չ պակաս քան 6 անգամ, շատ հեռու թողնելով ԱՄՆ-ի արդյունաբերական արտադրության ներկայիս ընդհանուր ծավալը։

Այդ վիթխարի խնդիրներն իրականացնելու համար պահանջվում են հրսկայական կապիտալ ներդրումներ։ Դրա համար էլ ծրագրում դրվում է կապիտալ ներդրումների և արտադրական ֆոնդերի առավել մտածված և խնայողաբար օգտագործելու խնդիրը։

Պատմական այդ խնդրի իրականացման համար կարևոր նշանակություն ունի հիմնական արտադրական ֆոնդերի աճման տեմպերի համեմատությամբ արտադրանքի տեմպերի ավելի արագ աճը, այսինքն՝ արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակության իջեցումը։

Ֆոնդապարունակությունը հիմնական արտադրական ֆոնդերի հարաբերությունն է որոշ ժամանակաշրջանում թողարկված արտադրանքի նկատմամբ։

Սակայն արտադրանքի մաքսիմալ թողարկման նկատմամբ հիմնական ֆոնդերի հարաբերությունը, որ տեսականորեն կարող է ստացվել որոշակի ժամանակամիջոցում, պետք է տարբերել հենց նույն ժամանակամիջոցում փաստացի թողարկված արտադրանքի նկատմամբ հիմնական ֆոնդերի ունեցած հարաբերությունից։

Արտադրանքի տեսական և փաստացի ֆոնդապարունակության միջև եղած գործակցի տարբերությունը արդյունաբերության արտադրության և ազգային եկամտի աճման հիմնական ռեզերվն է, որ դեռևս անբավարար է օգտագործվում։ Այնինչ կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծումը պահանջում է ամբողջությամբ և լրիվ օգտագործել սոցիալիստական արտադրաեղանակի ընդերքում եղած տնտեսական բոլոր առավելությունները, արագացնել սոցիալիստական ընդլայնված վերարտադրության տեմպերն ու մասշտաբները։

---

[1] *Ներկա հոդվածում քննարկվում են միայն արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերը։*

Սոցիալիստական ընդլայնված վերարտադրության տեմպերն ու մասշտաբները մեծապես կախված են արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակության գործակցից։

Այլ հավասար պայմաններում, որքան ցածր է արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակությունը, այնքանով բարձր են ինտենսիվ ընդլայնված վերարտադրության աճման տեմպերը, քանի որ վերջին հաշվով արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի իջեցումը գրեթե տնտեսական նույն արդյունքն է տալիս, ինչ տալիս է կապիտալ ներդրումների ավելացումը։

Արտադրական կուտակման տվյալ նորմայի ու մասսայի պայմաններում, որքան ցածր է արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակությունը, այնքան արագացված տեմպերով և ավելի պակաս կապիտալ ծախսումներով կարելի է լուծել ժողովրդական տնտեսության զարգացումը դեպի կոմունիզմ։

Արտադրանքի ֆոնդապարունակության իջեցումը օբյեկտիվ պայմաններ կստեղծի արտադրվող արտադրության միջոցների արժեքի սիստեմատիկ իջեցման համար, և դրա հիման վրա՝ սպառման առարկաների գների իջեցման համար, միաժամանակ ապահովելով արտադրանքի թողարկման բարձր տեմպերը և կրճատելով արտադրության ծախքերը։

Արտադրանքի աճման տեմպերի, այսինքն՝ ընդլայնված վերարտադրության, կախվածությունը արտադրանքի ֆոնդապարունակությունից ընդհանուր տեսքով կարելի է արտահայտել հետևյալ ֆորմուլայով.

$$Տ = \frac{ԿՆ + Ֆ.}{Ֆ_1}, \text{ որտեղ՝}$$

Տ-ն արտադրանքի աճման տեմպերն է,

ԿՆ՝ կուտակման նորման,

Ֆ.-ն՝ ֆոնդատարության ընթացիկ գործակիցը,

$Ֆ_1$-ը ֆոնդատարության բազիսային գործակիցը։

Արտադրանքի ֆոնդապարունակությունը հասարակական աշխատանքի արտադրողականության աճման, ինտենսիվ ընդլայնված վերարտադրության տեմպերի ու մասշտաբների պրոբլեմի մի մասն է և հնարավորություն է տալիս պլանավորել ընդլայնված վերարտադրության տեմպերն ու քանակական կախվածությունը։

Ահա թե ինչու արտադրանքի ֆոնդապարունակության դինամիկան մեծ նշանակություն ունի ժողովրդական տնտեսության հեռանկարային պլանավորման համար։

Տնտեսական առաջադիմության և հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման հիման վրա դիտելով արտադրանքի և հիմնական արտադրական ֆոնդերի փոխհարաբերությունը, կարելի է սահմանել հետևյալ երեք հիմնական վարիանտները.

1. Հիմնական արտադրական ֆոնդերն աճում են ավելի արագ, քան արտադրանքը։

2. Արտադրանքը և հիմնական ֆոնդերն աճում են հավասար տեմպերով։

3. Արտադրանքն աճում է ավելի արագ տեմպերով, քան հիմնական ֆոնդերը։

Տնտեսագիտական գրականության մեջ որոշ տնտեսագետներ պնդում են, որ տեխնիկական առաջադիմության վրա հիմնված աշխատանքի արտադրողականության աճը միշտ հանգեցնում է արտադրանքի ֆոնդապարունակության աճմանը, այսինքն՝ հիմնական ֆոնդերն արտադրանքից ավելի արագ են աճում։ Այդ տնտեսագետները ելնում են Ֆ. Էնգելսի հետևյալ թեզից. «Աշխատանքի արտադրողական ուժի բարձրացման բնորոշ կողմը հենց այն է, որ հաստատուն կապիտալի հիմնական մասն աճում է շատ ուժեղ կերպով, և սրա հետ էլ աճում է նույն արժեքի այն մասը, որը ներկայացնում է ապրանքին փոխանցված մաշվածքի արժեքը»[2]։ Սակայն այդ թեզը վերաբերում է որոշակի պայմաններին և տեխնիկական առաջադիմության որոշ տիպի։ Էնգելսի թեզը գլխավորապես վերաբերում է տեխնիկական առաջադիմության այնպիսի տիպին և աշխատանքի արտադրողականության աճմանը, երբ մասսայական մասշտաբով իրականացվում է անցումը ձեռքի աշխատանքից մեքենայական աշխատանքին, երբ աշխատանքի արտադրողականության աճն ուղեկցվում է արտադրանքի մեկ միավորին ընկնող կապիտալ ներդրումների աճով, բայց չի վերաբերում տեխնիկական առաջադիմության այն տիպին, երբ աշխատանքի արտադրողականության աճն ուղեկցվում է արտադրանքի մեկ միավորին ընկնող քիչ կապիտալ ներդրումներով, այսինքն՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման և նոր գյուտերի շնորհիվ կատարելագործվում և էժանանում են մեքենաները։ Այդ ընթացքում տնտեսվում է ո՛չ միայն կենդանի աշխատանքը, այլև հիմնական ֆոնդերի մեջ առարկայացած աշխատանքը։

Ուստի այն պնդումը, թե արտադրանքի ֆոնդապարունակությունն աճում է տեխնիկական առաջադիմության հետ, ճիշտ չէ, և բխում է այն բանը չհասկանալուց, որ տեխնիկական առաջադիմությունը հանգեցնում է ո՛չ միայն աշխատանքի ֆոնդապարունակության աճմանը, այլ նրա արտադրողականության աճմանը։ Ըստ որում աշխատանքի արտադրողականությունը կարող է ավելի արագ աճել, քան ֆոնդազինվածությունը։ Այսպես, օրինակ, 1960 թվականին Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհի արդյունաբերության մեջ, 1957 թվականի համեմատությամբ, մեկ աշխատողի աշխատանքի արտադրողականությունն աճել է 110,5 տոկոսով, իսկ աշխատանքի ֆոնդազինվածությունն աճել է 103,6 տոկոսով[3]։

Հիմնական ֆոնդերի համեմատությամբ արտադրանքի ավելի արագ աճման օրինաչափությունը արտահայտում է հասարակական աշխատանքի արտադրողականության աճը այնպիսի տեխնիկական առաջադիմության հիման վրա, որը փոքրացնում է արժեքը և մեծացնում հիմնական ֆոնդերի արտադրողականությունը։

Եթե տեխնիկական առաջադիմության հիման վրա աշխատանքի արտադրողականության աճը արտադրանքի միավորի մեջ պակասեցնում է թե՛ կենդանի և թե՛ առարկայացած աշխատանքի բաժինը, ապա հենց նույն տեխնիկական առաջադիմությունը և աճած աշխատանքի արտադրողականությունը պետք է իջեցնեն նոր արտադրվող հիմնական ֆոնդերի արժեքը։ Իսկ եթե դա այդպես է,

---

2 Կ. Մ ա ր ք ս, Կապիտալ, հատ. 3-րդ, մաս 1-ին, Հայպետհրատ, 1947, էջ 244։

3 Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհին վերաբերող այս և մյուս տվյալները վերցված են Ժողտնտխորհի պլանային-տնտեսական վարչությունից։

ապա նոր հիմնական արտադրական ֆոնդեր արտադրելու համար պահանջվում է ինչպես ավելի քիչ կենդանի, այնպես էլ առարկայացած աշխատանք, և այստեղից էլ՝ այդ հիմնական ֆոնդերով արտադրվող արտադրանքի միավորի արժեքը կպարունակի ավելի քիչ հիմնական ֆոնդ։ Բացի դրանից, եթե նոր արտադրվող արտադրական ֆոնդերն ավելի արտադրողական են, ապա արտադրանքի միավորի մեջ հիմնական ֆոնդերի փոխանցվող մաշվածքի բաժինը ավելի շատ է կրճատվում։

Այդ եզրակացությունը տրամաբանորեն բխում է Մարքսի հետևյալ թեզից. «...Մեքենաների միջոցով մեքենաներ արտադրելը պակասեցնում է նրանց արժեքը՝ նրանց չափերի ու գործողության համեմատությամբ»[4]։

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում ՍՍՌՄ արդյունաբերության մեջ գործում է հիմնական արտադրական ֆոնդերի աճման տեմպերի համեմատությամբ արտադրանքի աճման ավելի բարձր տեմպերի օրինաչափությունը, որն առաջացել է ինտենսիվ տեխնիկական առաջադիմության նոր տիպի և հասարակական աշխատանքի արտադրողականության բազայի վրա։ Այդ է վկայում հետևյալ աղյուսակը.

ՍՍՌՄ արդյունաբերության համախառն արտադրանքի և հիմնական ֆոնդերի աճը 1940—1959 թվականներին

Տոկոսներով

Տարիներ	Համախառն արտադրանքի աճման տեմպերը 1955 թ. հուլիսի 1-ի դներով	Արդյունաբերական արտադրական հիմնական ֆոնդերի աճման տեմպերը 1950 թ. դներով	Համախառն արտադրանքի առավել արագ աճման տեմպերը հիմնական ֆոնդերի համեմատությամբ	Արտադրանքի ֆոնդապարունակությունը
1940 թ.	100	100	—	100
1945 թ.	92	98	6	106,5
1946 թ.	77	104	—27	135.1
1947 թ.	93	113	—20	121.5
1948 թ.	118	125	— 7	105.9
1949 թ.	141	139	2	99,9
1950 թ.	173	154	19	89,1
1951 թ.	202	171	31	84.7
1952 թ.	225	190	35	84,4
1953 թ.	252	211	41	83,8
1954 թ.	285	236	49	82,8
1955 թ.	320	269	56	82,5
1956 թ.	354	295	50	83,4
1957 թ.	390	325	65	83,4
1958 թ.	430	366	64	85,1
1959 թ.*	480	377	110	78,6

Այս օրինաչափությունը հաստատվում է նաև Լենինգրադի, Մոսկվայի քաղաքային և մարզային, Կիևի, Հյուսիս-Օսեթիայի ժողտնտխորհների և Հայկական ՍՍՌ ժողտնտխորհի աշխատանքի պրակտիկայով։

---

4 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 1-ին, Հայպետհրատ, 1954, էջ 409։

* Народное хозяйство СССР в 1959 г., стр. 66, 143.

Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհի արդյունաբերության համախառն արտադրանքի և հիմնական ֆոնդերի աճման տեմպերը

Տոկոսներով

Տարիները	Համախառն արտադրանքի աճման տեմպերը	Հիմնական արտադրական ֆոնդերի աճման տեմպերը	Համախառն արտադրանքի առավել արագ աճման տեմպերը հիմնական ֆոնդերի համեմատությամբ	Արտադրանքի ֆոնդապարունակությունը
1957 թ.	100	100	100	0,58
1958 թ.	112,5	108,8	37	0,56
1959 թ.	125.9	119,2	6,7	0,55
1960 թ.	141,3	132,5	8,8	0,54

Հիմնական ֆոնդերի աճման տեմպերի համեմատությամբ արտադրանքի աճման տեմպերի առավել արագ աճման օրինաչափությունը դրսևորվում է արտադրողական ուժերի զարգացման որոշակի աստիճանում և հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման հետևանքն է՝ տեխնիկական առաջադիմության նոր տիպի պայմաններում, երբ ընդլայնված վերարտադրության համար բնորոշը, տիրապետողը դառնում է ավելի հզոր և արտադրողական աշխատանքի միջոցների զարգացման, կատարելագործման, էժանացման և արմատավորման առաջադիմականացնող պրոցեսը։ Տեխնիկական առաջադիմության շնորհիվ հայտնագործվում են նոր մեքենաներ և սարքավորումներ, ինչպես նաև արտադրության և տեխնոլոգիայի նոր մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս հիմնական ֆոնդերի փոքր քանակով արտադրել արտադրանքի ավելի մեծ մասսա։ Իսկ արտադրության մեջ այդ նորարարությունների տարածումն ու արմատավորումը տեխնիկական առաջադիմության տեմպերի արագացման կարևոր գործոններից մեկն է։ Տեխնիկական առաջադիմությունն էլ իր հերթին պայմաններ է ստեղծում նոր հայտնագործությունների համար, որոնք իջեցնում են հիմնական ֆոնդերի արժեքը և բարձրացնում նրանց արտադրողականությունն ու էֆեկտիվությունը։

«Կիրառվող մեքենաների մասսան և արժեքը աճում է աշխատանքի արտադրողական ուժերի զարգացման հետ, բայց աճում է ոչ այն հարաբերությամբ. որ աճում է ինքը արտադրողական ուժը, այսինքն՝ չի աճում այն չափով, ինչ չափով աճում է այդ մեքենաների թողարկած արտադրանքը»[5]։

Արտադրանքի աճման առավել արագ տեմպերը չեն դրսևորվում ավտոմատիկ կերպով, այլ դրսևորվում են հիմնական ֆոնդերի տնտեսման և արտադրության մեջ ավելի էֆեկտիվ արտադրողական ու էժան աշխատանքի միջոցներ արմատավորելու համար մղվող պայքարում։ Հիմնական ֆոնդերի համեմատությամբ արտադրանքի առավել արագ աճման օրինաչափությունը ներքնապես կապված է արտադրողական ուժերի զարգացման, տեխնիկական առաջադիմության և հասարակական աշխատանքի արտադրողականության աճման հետ, և որը դրանց զարգացման հետևանքն ու պայմանն է։ Նրա տնտեսական անհրաժեշտությունը բխում է սոցիալիստական արտադրաեղանակի օրինաչափությունից, որը պահանջում է արտադրանքի արտադրության համար ինչպես կենդանի, այնպես էլ առարկայացած աշխատանքի ավելի քիչ ծախսում։

5 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Երկեր, հատ. 19-րդ, մաս 1-ին, էջ 113։

Չի կարելի համաձայնել նաև մի շարք տնտեսագետների այն կարծիքի հետ, որոնք պնդում են աշխատանքի արտադրողականության բարձրացման և տեխնիկական առաջադիմության հետևանքով արտադրանքի միավորի արժեքի մեջ հիմնական ֆոնդերի մաշվածքի բաժնի բարձրացման անհրաժեշտության մասին։

Արտադրանքի արժեքի մեջ մաշվածքի, այսինքն՝ ամորտիզացիայի տեսակարար կշռի[6] և արտադրանքի ֆոնդապարունակության իջեցման ժխտումը բացառում են այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ինտենսիվ տեխնիկական առաջադիմության բնույթի և զարգացման, արտադրանքի և աշխատանքի կազմակերպման, հիմնական ֆոնդերի օգտագործման մակարդակի մեջ, ինչպես նաև արտադրության աշխատողների կուլտուր-տեխնիկական մակարդակի աճման մեջ և այլն։

Ահա՛ թե ինչու տնտեսագետների, կոնստրուկտորների և արտադրության աշխատողների շրջանում հիմնական ֆոնդերի և արտադրանքի հարաբերակցության պրոբլեմի մասին այդ անճշտության հաղթահարումը տեսական ու պրակտիկ խոշոր նշանակություն ունի։

Հիմնական ֆոնդերի և արտադրանքի միջև հարաբերակցության փոփոխության պատճառը պարզելու և բացատրելու համար, առաջին հերթին, հարկավոր է վերլուծել տեխնիկական առաջադիմության և հիմնական ֆոնդերի օգտագործման բնույթն ու ուղղությունը։

Պետք է տարբերել տեխնիկական առաջադիմության հիմնական երկու տիպ և ուղղություն։ Տեխնիկական առաջադիմության առաջին տիպը և ուղղությունը երկրորդից ավելի շուտ է հանդես եկել և երկրորդի հիմքն է հանդիսանում։ Այն բնութագրվում է նրանով, որ նպատակը և ուղղությունը կենդանի աշխատանքի տնտեսումն է՝ արտադրանքի միավորի մեջ աշխատանքի միջոցների բաժնի արժեքի ավելացման հաշվին։ Այնինչ տեխնիկական առաջադիմության երկրորդ տիպն ու ուղղությունը բնութագրվում է այն բանով, որ նրա նպատակը և ուղղությունը ոչ միայն կենդանի աշխատանքի, այլև անցյալ աշխատանքի. այսինքն՝ աշխատանքի միջոցների տնտեսումն է։ Տեխնիկական առաջադիմության վերջին տիպը ավելի առաջադիմական և արդյունավետ է ու ընկած է արտադրանքի ֆոնդապարունակության հիմքում։ Բայց դրանք երկուսն էլ գրտնվում են փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ և ընթանում են միաժամանակ։

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում տեխնիկական առաջադիմության գերակշռող և առաջատար տիպն ու ուղղությունը երկրորդն է։ Վերջինս ունի տեխնիկայի ու տեխնոլոգիայի տարբեր ուղղություններ ու տեսակներ։ Էնգելսի թեզն էլ հենց տեխնիկական առաջադիմության առաջին տիպի մասին է։

Ինտենսիվ տեխնիկական առաջադիմության նոր տիպի մասշտաբներն ու չափերը, որ հանգեցնում են հիմնական ֆոնդերի համեմատությամբ արտադրանքի ավելի արագ աճմանը, կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում ընդլայնվում են արագորեն։

---

6 Տե՛ս А. Дадонов. «Амортизация и ремонт основных средств в промышленности», 1960, стр. 95.

Այսպիսով, տեխնիկական առաջադիմության և արտադրանքի ֆոնդապարունակության միջև գոյություն չունի այնպիսի կախվածություն, որը արտադրողական ուժերի զարգացման և տեխնիկական առաջադիմության բոլոր էտապներում արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի դինամիկան միշտ էլ փոխի միևնույն ուղղությամբ՝ անկախ արտադրողական ուժերի զարգացման մակարդակից և տեխնիկական առաջադիմության տիպից։ Հենց տեխնիկական առաջադիմության տիպի և ուղղության ազդեցության տակ էլ արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի դինամիկան արտադրողական ուժերի զարգացման տարբեր էտապներում մերթ բարձրանում է, մերթ իջնում և, նույնիսկ, որոշ ժամանակ կարող է մնալ անփոփոխ։

Դիտելով ՍՍՌՄ արդյունաբերության մեջ տեխնիկական առաջադիմության ունեցած ազդեցությունը արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի դինամիկայի վրա, կարելի է արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի դինամիկայի մեջ սահմանել երկու տիրապետող տենդենց և ուղղություն։ Առաջինը, դա սոցիալիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանն է, երբ ինդուստրացվում էր երկիրը, տիրապետող տենդենցը արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի բարձրացման տենդենցն էր։ Սակայն այդ գործակիցը համեմատաբար բարձր չէր, չնայած ծանր արդյունաբերության առաջնահերթ զարգացմանը, որն ավելի ֆոնդապարունակ է։

Ֆոնդապարունակության դինամիկան ՍՍՌՄ արդյունաբերության մեջ 1925—1926 թվականներից մինչև 1956 թվականը[7]։

(Հիմնական ֆոնդերը հաշվված են տարվա ընթացքում 1 ռ. ընկնող համախառն արտադրանքով)։

Տարիներ	Ռուբլիներով	1928 թ. նկատմամբ տոկոսներով	Նախորդ տարվա նկատմամբ տոկոսներով
1925—1926 թթ.	0,83	166	100
1926—1927 թթ.	0,74	146	89
1928 թ.	0,50	100	68
1932 թ.	0,60	120	120
1937 թ.	0,60	120	100
1940 թ.	0,60	120	100
1945 թ.	0,64	128	107
1950 թ.	0,52	106	83
1955 թ.	0,49	98	92
1956 թ.	0,49	98	100

Համեմատաբար ցածր ֆոնդապարունակությունը բացատրվում է արտադրության միջոցների հասարակական սեփականությամբ, ժողովրդական տնտեսության պլանայնությամբ և տեխնիկայի զարգացման, ձեռնարկությունների վերակառուցման ու մոդեռնացման միասնական պլանով, նոր տեխնիկայի հիման վրա նոր ձեռնարկությունների շինարարությամբ, հիմնական ֆոնդերի էֆեկտիվ օգտագործմամբ, տեխնիկական առաջադիմության, աշխատանքի արտադրողականության աճման և արտադրանքի ինքնարժեքի իջեցման գործում արտադրության աշխատողների շահագրգռվածությամբ, արտադրության

7 Տե՛ս «Вопросы экономики» ամսագիր, 1959, № 8, էջ 8։

աշխատողների թվաքանակի աճումով, բազմահերթափոխության անցումով և այլն։

Երկրորդ, կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում տիրապետող է դառնում արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի իջեցման տենդենցը։

Այսպիսով, արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի դինամիկան մի այնպիսի պրոցես է, որտեղ գոյություն ունեն հակագործող պատճառներ ու տենդենցներ, դրա հետևանքով էլ արտադրանքի ֆոնդապարունակության դինամիկան անընդհատ բարձրացող կամ անընդհատ իջնող մեծություն չէ։ Սակայն երբ աշխատանքի մեքենայացումը դառնում է կենդանի աշխատանքի տիրապետող տեսակը, արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի դինամիկայի հիմնական ուղղությունը դառնում է նրա իջեցումը, այսինքն՝ ֆոնդապարունակության գործակցի դինամիկան սկսում է արտահայտել հիմնական ֆոնդերի աճման տեմպերի համեմատությամբ արտադրանքի առավել արագ աճման օրինաչափությունը։

ՍՍՌՄ արդյունաբերության մեջ արտադրանքի ֆոնդապարունակության իջեցմանը նպաստող կարևոր գործոններից մեկը հիմնական ֆոնդերի օգտագործման էֆեկտիվության բարձրացումն է արդյունաբերության բոլոր ճյուղերում։ Այսպես, օրինակ՝

ՍՍՌՄ արդյունաբերության մեջ հիմնական ֆոնդերի օգտագործման տվյալները[8]

Ցուցանիշները	1940 թ.	1950 թ.	1959 թ.
Դիզելային վառարանների օգտակար ծավալի օգտագործման գործակիցը (մ. խոր. տոննի հաշվով)	1,19	0.98	0,77
Դիզելային վառարանների ընթացիկ պարապուրդները (տոկոսներով նոմինալ ժամանակի նկատմամբ)	4,6	1.8	1,1
Պոդպատի միջին օրական ծավալը մարտենյան վառարանների 1 մ² հատակից (տոննաներով)	4,24	5,36	7,48
Մարտենյան վառարանների պարապուրդները, տոկոսներով, օրացուցային ժամանակի նկատմամբ—ամբողջը . .	24,2	17,9	11,0
Նավթային և գազային հորատանցքերի շահագործման հորատման արագությունը, մեկ հաստոցի հաշվով ամսվա ընթացքում (մետրերով)	412	629	996
Էլեկտրակայանների տեղակայված հզորությունների միջին տարեկան օգտագործման ժամերի թիվը բոլոր էլեկտրակայաններում	4650	5015	4775
Ցեմենտային պտտվող վառարանների օգտագործման գործակիցը (օրացուցային ժամանակով)	0,51	—	0,88
Ցեմենտային աղացների օգտագործման գործակիցը (օրացուցային ժամանակով)	0.54	—	0,82
Բամբակի թելի մշակումը մեկ կիլոժամով (կգ)	4,3	—	7.2
Բամբակի թելի ելունքը հումքից (տոկոսներով)	32,6	—	33,8

8 Տե՛ս Народное хозяйство СССР в 1959 г., стр. 173, 174, 187, 197, 235, 248.

Հիմնական ֆոնդերի լավ օգտագործումը հիմնական ֆոնդերի որոշակի տարրերի մեջ առարկայացած աշխատաժամանակի տնտեսումն է։

Հիմնական ֆոնդերի էֆեկտիվ օգտագործումը արտադրանքի աճմանը նպաստում է գրեթե այնպես, ինչպես նոր կապիտալ ներդրումների հաշվին աշխատանքի ֆոնդազինվածության աճը, ըստ որում, արտադրանքի ֆոնդազինվածության գործակիցը փոփոխվում է՝ կախված այդ կապիտալ ներդրումների նպատակից և ուղղությունից։ Միաժամանակ, ինչպես հիմնական ֆոնդերի օգտագործման էֆեկտիվության բարձրացման դեպքում, արտադրանքի ֆոնդապարունակության գործակիցը փոխվում է միայն մեկ ուղղությամբ, այսինքն՝ իջնում է։

Աշխատանքի միջոցների տնտեսումը մեծացնում է ազգային եկամտի ֆիզիկական ծավալը առանց լրացուցիչ կապիտալ ներդրումների և դրանով իսկ բարձրացնում է կենդանի աշխատանքի արդյունավետությունը։

Արդյունաբերության մեջ ամբողջությամբ վերցրած արտադրանքի ֆոնդապարունակության վրա զգալի ազդեցություն է ունենում արդյունաբերության կառուցվածքի փոփոխությունը, քանի որ արդյունաբերության մեջ ամբողջությամբ վերցրած արտադրանքի ֆոնդապարունակության գործակիցը և նրա շարժումը կախված են արդյունաբերության ճյուղերի արտադրանքների ֆոնդապարունակության գործակցից։ Իսկ վերջինիս մակարդակը արդյունաբերության տարբեր ճյուղերում զգալիորեն տարբերվում են միմյանցից։

Այսպես, օրինակ, եթե սև մետալուրգիայի մեջ արտադրանքի ֆոնդապարունակության գործակիցն ընդունենք 100, ապա վառելիքային արդյունաբերության մեջ այն կկազմի մոտավորապես 192, էլեկտրաէներգիայի և վառելիքային էներգիայի արտադրությունը՝ 298, մեքենաշինության և մետաղամշակման մեջ՝ 50, այդ թվում էներգետիկ մեքենաշինության, հաստոցաշինության և գործիքաշինության արդյունաբերության մեջ՝ 89, տրակտորային և գյուղատնտեսական մեքենաշինության մեջ՝ 46, քիմիական արդյունաբերության մեջ՝ 63, անտառային, թղթի և փայտամշակման արդյունաբերությունում՝ 75, շինանյութերի արդյունաբերության մեջ՝ 108, այդ թվում ցեմենտինը՝ 157, թեթև արդյունաբերության մեջ՝ 16, սննդարդյունաբերության մեջ՝ 27[9]։

Այսպիսով, արդյունաբերության առանձին ճյուղերում արտադրանքի ֆոնդապարունակության մակարդակը տատանվում է 16-ից 298-ի սահմաններում։

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում գիտա-տեխնիկական ռևոլյուցիայի հիման վրա արդյունաբերության ճյուղային կառուցվածքի զարգացումն ու փոփոխությունը հնարավորություն կտա արդյունաբերության ճյուղերը զարգացնել ավելի օպտիմալ ուղիներով։

ՍՄԿՊ Ծրագրում նշված են այդ փոփոխությունների հիմնական ուղղությունները։ Բարձրանում է այս նոր ճյուղերի դերը, որոնք ապահովում են տեխնիկական առաջադիմությունը։ Ըստ որում արդյունաբերության նոր ստեղծվող և զարգացող առաջադիմական ճյուղերը ունենում են տեխնիկական ավելի բարձր մակարդակ և ավելի արագ տեմպերով են զարգանում, քան նախկինում

---

9 Արտադրանքի ֆոնդապարունակության գործակիցը հաշվված է հիմնական ֆոնդերի 1960 թվականի հունվարի 1-ի վերականգնման արժեքով։

գործող հին ճյուղերը։ Ըստ որում արտադրանքի ֆոնդապարունակության գործակիցը նրանցում ավելի ցածր է, քան արդյունաբերության մեջ ամբողջությամբ վերցրած։

Արդյունաբերության նոր ճյուղերը, որպես կանոն, իրենց զարգացումն սկսում են արտադրանքի ֆոնդապարունակության համեմատաբար ավելի բարձր գործակցով, քան զարգացման հետագա շրջանում, քանի որ արտադրական շինարարության վրա կատարված ծախսումների հարաբերությունը սարքավորումների վրա կատարված ծախսումների նկատմամբ սկզբնական շրջանում ավելի բարձր է, քան հետագայում։ Ուստի զարգացման որոշ աստիճանում նոր ճյուղերում արտադրանքի ֆոնդապարունակության գործակիցը սկսում է իջնել և այն էլ ավելի արագ տեմպերով, քան հին ճյուղերում։

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում արդյունաբերության մեջ կառուցվածքային փոփոխությունը զգալի չափով կախված է արդյունաբերական արտադրանքի մասշտաբներից ու աճումից։ Արտադրողական ուժերն ու տեխնիկական առաջադիմությունը որքան ինտենսիվ են զարգանում, այնքան հարուստ, բազմաբովանդակ և բարդ է դառնում արդյունաբերության ճյուղային կառուցվածքը, աճում է արտադրանքի հասարակական բաժանման մակարդակը· ավելի է զարգանում արտադրության մասնագիտացումն ու կոոպերացումը, շատ են մասնագիտացված ձեռնարկություններն ու ժողովրդական տնտեսության ճյուղերը և ցածր է արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակության գործակիցը։

Այսպիսով, արդյունաբերության բարձր արտադրողական, առաջադիմական կառուցվածքի զարգացումն ու ստեղծումը կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում, հիմնական ֆոնդերի աճման համեմատությամբ արտադրանքի ավելի արագ տեմպերով աճման կարևոր պայմանն է։

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը և արտադրանքի աճը զգալի չափով տեղի է ունենում աշխատանքի էլեկտրազինվածության աճման հիման վրա, քանի որ ժամանակակից մեքենաներն ու սարքավորումները հիմնականում գործում են էլեկտրաէներգիայով։ Ուստի, էլեկտրազինվածությունը, որպես կանոն, արտահայտում է գործող մեքենաների ու սարքավորումների հզորությունը։ Էլեկտրաէներգիան որպես շարժիչ ուժ, բացառիկ մեծ հեռանկար ունի բարձր հզորության էֆեկտիվ մեքենաներ ու սարքավորումներ ստեղծելու գործում, քանի որ իր որակով էներգիայի ամենաառաջադիմական, ունիվերսալ ձևն է։

Էլեկտրաէներգիան ռևոլյուցիոնականացնող ազդեցություն է թողնում և՛ աշխատանքի արտադրողականության, և՛ մեքենաների ու սարքավորումների կառուցվածքի, և՛ տեխնիկայի ու տեխնոլոգիայի վրա արտադրության բոլոր ճյուղերում։

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում էլեկտրաէներգիայի բազայի վրա արտադրության պրոցեսների հետագա կոմպլեքս մեքենայացումն ու ավտոմատացումն ամեն մի բանվորի կգինի առավել հզոր ու արդյունավետ մեքենայով ու սարքավորումով, որը կնպաստի արտադրանքի ֆոնդապարունակության իջեցմանը։

էլեկտրաէներգիայի արտադրության և էլեկտրամատակարարման հետագա համակենտրոնացումն ու կենտրոնացումը, ինչպես նաև ՍՍՌՄ միասնական էներգոսիստեմի ստեղծումը, որ նախատեսված է ՍՄԿՊ նոր Ծրագրում, հնարավորություն կտա սահմանել էլեկտրակայանների աշխատանքի ու էներգիայի սպառման միասնական ռեժիմ և վերացնել գոյություն ունեցող փոքր, ո՛չ տնտեսավետ մանր էլեկտրակայաններր։ Այս միջոցառումը զգալիորեն կարագացնի նոր հզորությունների ավելացումը և արտադրանքի ֆոնդապարունակության իջեցումը, քանի որ ինչքան բարձր է արտադրանքի էլեկտրազինվածությունը, մնացած բոլոր հավասար պայմաններում, այնքան բարձր է աշխատանքի արտադրողականությունը և ցածր է արտադրանքի ֆոնդապարունակության գործակիցը։

Որոշ տնտեսագետներ պնդում են արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակության անխուսափելի և անհրաժեշտ աճման մասին՝ որպես արտադրության միջոցների արտադրության առավել աճման ուղեկցի։ Այսպես, օրինակ, Ռ. Լևինը գրում է, որ արտադրանքի ֆոնդապարունակության իջեցումը «օբինապես կապված է այն վուլգարացնողների «տեսության» հետ, որոնք փորձում են ռևոլյուցիայի ենթարկել արտադրության միջոցների արտադրության առավել աճման օրենքը։ Այդ «տեսության» համաձայն սոցիալիստական արտադրության զարգացման համար գլխավորը ո՛չ թե նոր տեխնիկայի ներդրումն է, այլ արտադրանքի միավորի մեջ հիմնական ֆոնդերի ծախսումների պակասեցումը»[10]։

Արդյունաբերական արտադրանքի աճող ֆոնդապարունակությունը ՍՍՌՄ արդյունաբերության մեջ արտադրության միջոցների արտադրության առավել աճմանն ուղեկցել է սոցիալիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում։ Այդ ժամանակաընթացքում տեխնիկական առաջադիմությունը, աշխատանքի ֆոնդազինվածության աճը և ֆոնդերի օրգանական կառուցվածքի հանգեցրին արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի և արտադրության միջոցների արտադրության առավել արագ աճմանը, իսկ դրանք հանդիսանում են տեխնիկական առաջադիմության և ֆոնդերի օրգանական կառուցվածքի աճման արտահայտությունը։ Սակայն կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ինտենսիվ զարգացման ժամանակաշրջանում ՍՍՌՄ արդյունաբերության մեջ գլխավոր տենդենցը մնում է արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի իջեցումը՝ արտադրության միջոցների արտադրության առավել աճմամբ հանդերձ, քանի որ, որպես արտադրության միջոցների արտադրության առավել արագ աճման տեմպերի վճռող, որոշիչ գործոն, հանդես է գալիս հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացումը, իսկ վերջինս անընդհատ տեխնիկական առաջադիմության, աշխատանքի միջոցների էֆեկտիվության և արտադրության կազմակերպման մակարդակի բարձրացման արդյունքն է։ Հենց արդի տեխնիկական առաջադիմության տիպն է պարունակում այն օրինաչափությունը, որն արտահայտվում է արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի իջեցման և սպառման առարկաների համեմատությամբ արտադրության միջոցների արտադրության առավել արագ աճման մեջ։ Դա երևում է հետևյալ աղյուսակից.

---

10 «Вопросы экономики» ամսագիր, 1956, № 8, էջ 60։

ՍՍՌՄ արդյունաբերության մեջ I և II ստորաբաժանումների հիմնական արտադրական ֆոնդերի համախառն արտադրանքի աճի դինամիկան[11]

	1940 թ.	1950 թ.	1959 թ.
Համախառն արտադրանքը	100	320	4,8 անգամ
Հիմնական արտադրական ֆոնդերը	100	263	3,77 անգամ
Արտադրության միջոցների արտադրությունը . .	100	390	6 անգամ
Սպառման առարկաների արտադրությունը . . .	100	217	3 անգամ

Աղյուսակից երևում է, որ հիմնական արտադրական ֆոնդերն ավելի արագ տեմպերով են աճում, քան սպառման առարկաների արտադրությունը։ Դա տեխնիկական առաջադիմության և աշխատանքի հասարակական բաժանման խորացման հետևանքն է։ Միաժամանակ համախառն արտադրանքի աճման տեմպերն անցնում են հիմնական արտադրական ֆոնդերի աճման տեմպերից, իսկ արտադրության միջոցների արտադրությունն աճում է ավելի բարձր տեմպերով, քան ամբողջ համախառն արտադրանքը։

Առաջին ստորաբաժանման կազմում գերակշռող մասը աշխատանքի առարկաներն են, և արդյունաբերության մեջ սպառման առարկաների արտադրության համեմատությամբ արտադրության միջոցների արտադրության առավել արագ աճը իրականացվում է գլխավորապես աշխատանքի առարկաների հաշվին։ Այնպես որ արտադրողականության աճը երևան է գալիս հիմնական ֆոնդերի արժեքի միևնույն միավորներ պարունակող աշխատանքի ավելի աճող մասսայի սպառման մեջ, որի հիման վրա արտադրանքն ավելի արագ է աճում քան հիմնական ֆոնդերը։

Առաջին ստորաբաժանման կազմում արտադրության գործիքների ավելի արագ աճը, քան արտադրության միջոցների արտադրության աճն ամբողջությամբ վերցրած, արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակության իջեցման կարևոր գործոն է։ Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում արտադրության միջոցների կազմում աշխատանքի գործիքների բաժնի աճը զուգակցվում է աշխատանքի գործիքների տեխնիկապես ավելի առաջադիմական և արդյունավետ տարրերի հետ, որը կատարվում է հենց իրենց աշխատանքի գործիքների զարգացման և կատարելագործման հաշվին։

ՍՄԿՊ նոր Ծրագրում նախատեսված է անընդհատ կատարելագործել և ստեղծել մեքենաների ու սարքավորումների առավել առաջադիմական և տընտեսավետ սիստեմ։ Արագ զարգացում կստանան մեքենաների այնպիսի կոնստրուկցիաները, որոնք ունենալով ավելի բարձր տեխնիկական հատկություններ, կպակասեցնեն հումքի ու էներգիայի ծախսումները և կբարձրացնեն աշխատանքի արտադրողականությունը։

ՍՄԿՊ Ծրագրում նշվում է նաև կապիտալ ծախսումների կառուցվածքը մշտապես բարելավելու, և նրանց կազմում մեքենաների, սարքավորումների ու հաստոցների բաժինը բարձրացնելու անհրաժեշտությունը։

[11] Տե՛ս Народное хозяйство СССР в 1959 г., стр. 143, 66.

Մարքսը աշխատանքի գործիքները համարում էր արտադրության ոսկրային և մկանային հիմքը։ Ուստի, քանի որ դրանք անհրաժեշտ են արտադրության ավտոմատացման և մեքենայացման համար և, ստեղծվում են առաջին ստորաբաժանման մեջ, իսկ արդյունաբերության մեջ կոմպլեքսային մեքենայացումն ու ավտոմատացումը տեխնիկական առաջադիմության գլխավոր ուղղությունն են, դրա համար է՛լ առաջին ստորաբաժանման տնտեսական արդյունավետությունն արտահայտվում է այն բանում, որ առաջին ստորաբաժանման արտադրանք հանդիսացող աշխատանքի գործիքները ավելի արտադրողական և ավելի էժան են լինում, քան նախկինում։

1940—1959 թվականների ընթացքում արտադրանքի աճման ավելի բարձր տեմպերը առաջին ստորաբաժանման այնպիսի ֆոնդապարունակ ճյուղերում, ինչպես էլեկտրաէներգիայի և վառելիքային էներգիայի արտադրությունն ու շինանյութերի արդյունաբերությունն են, բարձրացրել են ընդհանուր արդյունաբերության արտադրանքի ֆոնդապարունակության գործակիցը։ Սակայն այդ տենդենցը հաղթահարել, հաղթահարում է և կհաղթահարի հակատենդենցը, այսինքն՝ արդյունաբերության արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի անընդհատ իջեցման տենդենցը առաջին ստորաբաժանման այնպիսի ավելի քիչ ֆոնդապարունակ ճյուղերի աճման բարձր տեմպերի հիման վրա, ինչպիսիք մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունն են։

Մեքենաշինության, քիմիական արդյունաբերության և էներգետիկայի առավել արագ զարգացումը ընդհանուր արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակության և արտադրության միջոցների արտադրության առավել արագ աճման տեմպերի հիմքն են։ Բայց, երբ այդ ճյուղերում մեքենայացված աշխատանքը կդառնա տիրապետող, այդ ճյուղերը հանդես կգան որպես ընդհանուր արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի իջեցման հզոր գործոններ։

Առաջին ստորաբաժանման կազմում արտադրական մեքենաշինության արտադրանքի առավել արագ աճը հանդիսանում է արտադրության միջոցների արտադրության առավել արագ աճման օրենքի գործողության և արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակության իջեցման վճռող գործոնը, քանի որ մեքենաշինական արդյունաբերությունը առաջին ստորաբաժանման ամենաֆոնդապարունակ ճյուղն է։ Մեքենաշինության արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունն աճում է ավելի արագ, քան արդյունաբերության մյուս ճյուղերում և, դրա համար էլ, արտադրական մեքենաշինության արտադրանքի արժեքն ավելի արագ է իջնում, քան արդյունաբերության մյուս ճյուղերինը։ Այդ բանը նպաստում է արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի իջեցմանը ո՛չ միայն հենց մեքենաշինության արդյունաբերության մեջ, այլև արդյունաբերության և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։ Այսպես, օրինակ.

Աշխատանքի արտադրողականության աճը ՍՍՌՄ արդյունաբերության մեջ և նրա առանձին ճյուղերում (համախառն արտադրանքը մեկ բանվորի հաշվով)[12]

Ճյուղերը	1959 թվականը 1940 թվականի նկատմամբ տոկոսներով	1959 թվականը 1950 թվականի նկատմամբ տոկոսներով
Ամբողջ արդյունաբերությունը (առանց կոլտնտեսությունների արդյունաբերության)	257	187
Արտադրության միջոցների արտադրություն		
Ջուղունի հալումը (վերածած վերաիոխելի չուգունի) դոմնային ցեխերի 1 բանվորի հաշվով	254	190
Մարտենյան պողպատի հալումը մարտենյան ցեխերի 1 բանվորի հաշվով	232	162
Սև մետաղների գլանվածքի արտադրությունը (առանց ձուլածո խողովակների և կռածոների) գլանվածքային ցեխերի 1 բանվորի հաշվով	185	152
Քարածխի հանույթը մեկ բանվորի հաշվով	134	136
Նավթի հանույթը	222	269
Մեքենաշինություն	427	253
Քիմիական և ռետինաագրեստային արդյունաբերություն	396	211
Շինանյութերի արդյունաբերություն	284	242
Փայտամթերում (կոմպլեքսային արտադրանքը մեկ բանվորի հաշվով)	161	180

Մեքենաշինության արդյունաբերությունը աշխատանքի արտադրողականության մշտական աճման և արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի իջեցման նյութական հիմքն է։ Ուստի, մնացած հավասար պայմաններում, այն երկրում, որտեղ արդյունաբերության կազմում մեքենաշինության բաժինը բարձր է, ապա այդ երկրում արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակությունը ցածր է, այն երկրի համեմատությամբ, որտեղ մեքենաշինության բաժինը ցածր է։

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում մեքենաշինությունն ավելի ու ավելի մեծ ազդեցություն կունենա հիմնական ֆոնդերի առավել ակտիվ տարրերի ինտենսիվ վերարտադրության գործում։ Տեխնիկական առաջադիմության արագացումը և արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի իջեցումը արդյունաբերության բոլոր ճյուղերում զգալի չափով կախված կլինի մեքենաների, սարքավորումների, մեխանիզմների, պրիբորների և ապարատների զարգացումից ու կատարելագործումից։ Չէ որ առանց դրան հնարավոր չէ զգալի չափով ավելացնել արտադրանքի թողարկման ծավալը։ Ուստի ՍՍՌՄ գլխավոր տնտեսական խնդրի լուծման վճռական գործոնը, ինչպես նշված է ՍՄԿՊ Ծրագրում, ժողովրդական տնտեսության պա-

12 *Տե՛ս* Народное хозяйство СССР в 1959 г., стр. 152—153.

հանջը մեքենաների, հաստոցների և ապարատների բոլոր տեսակների նկատմամբ լրիվ բավարարելն է։

Արտադրության միջոցների արտադրության առավել արագ աճման պայմաններում հիմնական ֆոնդերի աճման համեմատությամբ արտադրանքի առավել արագ աճման օրինաչափությունը իր ուժը կպահպանի նաև հետագայում, քանի որ յոթնամյա պլանով 1965 թվականի համար նախատեսված արդյունաբերական արտադրանքի ծավալը 1940 թվականի ծավալը կգերազանցի 7,7 անգամ, այդ թվում «Ա» խումբը կաճի 9,9—10,1, իսկ «Բ» խումբը՝ 6,0—6,1 անգամ[13], իսկ արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերը կաճեն 7,5 անգամ[14]։ Սակայն յոթնամյա պլանի իրականացման ընթացքում արտադրանքի աճման և կապիտալ ներդրումների տնտեսման հսկայական ռեզերվներ են ի հայտ գալիս։ Յոթնամյակի երկու տարում արդյունաբերության համախառն արտադրանքն ավելացել է 22,1 տոկոսով, յոթնամյա պլանով նախատեսված 17 տոկոսի փոխարեն։ 1961 թվականին Հայկական ՍՍՌ արդյունաբերական արտադրանքի ծավալը, 1958 թվականի համեմատությամբ ավելացավ 40 տոկոսով, յոթնամյա պլանով նախատեսված 32,3 տոկոսի փոխարեն[15]։

Արդյունաբերական արտադրանքի աճող ֆոնդապարունակությունը ո՛չ եղել արտադրության միջոցներ՝ արտադրության առավել արագ աճման հետ, եղել արտադրության միջոցների արտադրության առավել արագ աճման հետ, նրանց միջև դիալեկտիկական կապ չկա։ Այդ պատճառով է՛լ արդյունաբերական արտադրանքի ֆոնդատարության դինամիկան փոխվում է արտադրության միջոցների արտադրության առավել աճման օրենքից անկախ, քանի որ միևնույն պատճառները արտադրողական ուժերի զարգացման տարբեր էտապներում առաջ են բերում տնտեսական տարբեր հետևանքներ։

Արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի դինամիկայի վրա ազդում են չափազանց բազմազան հակազդող գործոններ, և երբ դրանք խմբավորվեն, ապա դրանցից գլխավորները կլինեն.

1. Տեխնիկական առաջադիմության բնույթը և ուղղությունը։
2. Արտադրության հանրայնացումը՝ համակենտրոնացումը, մասնագիտացումը, կոոպերացումը և կոմբինավորումը։
3. Հիմնական ֆոնդերի օգտագործումը և նրանց կառուցվածքը։
4. Արդյունաբերության ճյուղային կառուցվածքը։
5. Կապիտալ ներդրումների կառուցվածքը և ուղղությունը։
6. Արդյունաբերության տեղաբաշխումն ու բնական պայմանները։
7. Աշխատանքի միջազգային բաժանումը։

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում գործում են և հետագայում էլ կգործեն այնպիսի գործոններ, որոնք հակազդում են արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակության իջեցմանը, օրինակ, երկրի կլիմայական տեսակետից քիչ բարենպաստ Արևելյան շրջանների հետագա ար-

---

13 Տե՛ս Народное хозяйство СССР в 1959 г., стр. 485

14 Տե՛ս Экономика социалистической промышленности, Госполитиздат, 1961, стр. 485.

15 Տե՛ս ՀԿՊ Կենտկոմի հաշվետու զեկուցումը ՀԿՊ 22-րդ համագումարին, ՀԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ն. Յա. Քարոյանի զեկուցումը, «Սովետական Հայաստան», 23 սեպտեմբերի, 1961։

դյունաբերական յուրացումը, արդյունաբերության առավել ֆոնդապարունակ ճյուղերի (էներգետիկա, սև մետալուրգիա, նավթի և գազի արդյունաբերություն) զարգացումն ավելի բարձր տեմպերով, քան ամբողջ արդյունաբերության զարգացման տեմպերն են, տեխնիկայի ու տեխնոլոգիայի առաջնահերթ արմատավորումն արդյունաբերական աշխատատար ճյուղերում, տեխնիկայի ներդրումը՝ աշխատանքային և տեխնիկական անվտանգության պայմանները բարելավելու նպատակով, առաջնահերթ ներդրումն ու յուրացումը այն նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի, որոնք իրենց տնտեսական նշանակությունը դեռ լրիվ կերպով չեն դրսևորել։

Բայց որքան էլ ուզում է զգալի և լուրջ լինեն այդ հակագործող տենդենցները, դրանք չեն կարող ոչնչացնել արտադրանքի ֆոնդապարունակության գործակցի իջեցման տենդենցը, բացի այն՝ որոշ չափով թուլացնելուց։ Սակայն ընդհանուր օրինաչափությունն ունի իր բացառությունները որոշ ձեռնարկությունների, ժողտնտխորհների, ինչպես նաև արդյունաբերության առանձին ճյուղերի գծով, որոնցում տեղի կունենա արտադրանքի ֆոնդապարունակության բարձրացումը։

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում միանգամայն հնարավոր է, որ առանձին տարիների ընթացքում արտադրանքի արտադրությունը և հիմնական ֆոնդերը զարգանան կամ կզարգանան հավասար տեմպերով և, նույնիսկ, հիմնական ֆոնդերն ավելի արագ աճեն, քան արտադրանքի թողարկումը։

Սակայն դա չի նշանակում, թե հիմնական ֆոնդերի աճման տեմպերի համեմատությամբ, արտադրանքի առավել արագ աճման տեմպերի օրինաչափությունը կդադարի գոյություն ունենալուց և չի գործի, այսինքն՝ արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակության գործակիցը այլևս չի իջնի, որովհետև, պարտադիր չէ, որ արտադրանքի ֆոնդապարունակության իջեցման օրինաչափությունն իրականացնելու համար ամեն տարի արտադրանքի աճման տեմպերը միշտ էլ բարձր լինեն հիմնական ֆոնդերի աճման տեմպերից։

Ուստի այդ օրինաչափությունը հարկավոր է դիտել ավելի երկար ժամանակի համար, արտադրողական ուժերի զարգացման, թեկուզ, օրինակ, հնգամյա, տասնամյա, կամ ավելի երկարատև ժամանակաշրջանի համար

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում սոցիալիստական արտադրական հարաբերություններն ավելի բարենպաստ պայմաններ կստեղծեն՝ արդյունաբերական արտադրանքի ֆոնդապարունակության նյութական հիմքի զարգացման և ընդլայնման համար, ինտենսիվ տեխնիկական առաջադիմության և հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։